ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.12.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/87

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ի տնօրեն Է. Թովմասյանի (պետական գրանցման վկայականի համար՝ 278.110.1069839),

Միասնական սոցիալական ծառայության ներկայացուցիչ

Գ. Ջանջուղազյանի (լիազորագիր՝ տրված 01.12.2021թ.),

քննելով Միասնական սոցիալական ծառայության կարիքների համար անվտանգության ապահովման ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարված «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից 25.11.2021թ. ներկայացված (26.11.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/87 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>«Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 25.11.2021թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

««Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊ Ընկերությունը մասնակցել է ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ կողմից «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/1» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին: Հայտերի բանումը տեղի էր ունեցել 04.11.21թ-ին ժամը 11:30-ին: Նախահաշվային գինը սահմանված էր 10.000.000 /տաս միլիոն ՀՀ դրամ /նեռարյալ ԱԱՀ/: Մեր ընկերության կոցմից ներկայացված գնային առաջարկը, կազմում էր 10.000.000 /տաս միլիոն ՀՀ դրամ /նեռարյալ ԱԱՀ/: Աճուրդի մեկնարկային գինը եղել է 4.800.000 /չորս միլիոն ութ հարյուր հազար ՀՀ դրամ /առանց ԱԱՀ-ի/: Նվազեցման գինը 48.000 /քառասունութ հազար ՀՀ դրամ մեկ անգամվա համար:

Հակադարձ աճուրդը տեղի էր ունեցել 05.11.21թ-ին ժամը 11:30-ին: Մեր ընկերությունը մասնակցել էր գների նվազեցման հակադարձ աճուրդին: Բայց ամբողջ աճուրդի ընթացքում համակարգը կախում էր, այսինքն ժամանակը կանգնում էր և չեր ցույց տալիս ինչքան անցավ ժամանակ ներկայացված գնից, միայն թարմացնելով համակարգը ժամանակը սկում էր աշխատել: Վերջին րոպեներին համակարգը կախել էր ևս մեկ անգամ ներկայցված գինը, որը մենք ուղարկել ենք եղել էր 3.502.000 /երեք միլիոն հինգ հարյուր երկու հազար/ ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի/: Քանի որ գումարները գրվում են առանց ԱԱՀ-ի: Բառերով գրվել էր այս նույն թիվը /երեք միլիոն հինգ հարյուր երկու հազար/ ՀՀ դրամ և ընդհանուր գինը ներառյալ ԱԱՀ-ն կազմել էր 4,202.400 /չորս միլիոն երկու հարյուր երկու հազար չորս հարյուր/ ՀՀ դրամ:

Երբ Աճուրդը ավարտվեց պարզվեց, որ տեղի է ունեցել համակարգի սխալ, ուղարկված 3.502.000 /երեք միլիոն հինգ հարյուր երկու հազար/ ՀՀ դրամ գնի փոխարեն գրվել էր 350200 /երեք հարյուր հիսուն հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ: Ահռելի տարբերություն է:

Հիմա մեր ընկերությունը ընկել է վատ դրության մեջ:

«Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ն միշտ պատշաճ կերպով կատարել էր և այս պահին կատարում է բոլոր հաղթած մրցույթներով իր վրա դրված պարտականությունները և հիմա համակարգի սխալի պատճառով, էլ չի կարողանա շարունակել իր գործունեությունը և որակյալ ծառայություն մատուցել պետական գնումներով կազմակերպված մրցույթներին ներկայացված պատվիրատուներին:

Պահանջում ենք՝

1. Վերոնշյալ մրցույթի բանակցային գործընթացը չեղյալ համարվի և հրավիրել բոլոր մասնակիցներին նոր բանկցությունների, բայց անձնական, առանց աճուրդային /համակարգչով/ համակարգի:

2. «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

3. Քանի որ առաջարկվող պայմանագրի գինը, որը կազմում է 420.240 /չորս հարյուր քսան հազար երկու հարյուր քառասուն/ ՀՀ դրամ, պակաս է ինքնարժեքից, պահանջում ենք պայմանագիրը չեղյալ համարել:

4. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ կողմից տրված նախահաշվային գինը, կազմում էր 10.000.000 /տաս միլիոն ՀՀ դրամ, որը անհամեմատելի է 350.200 /երեք հարյուր հիսուն հազար երկու հարյուր/ ՀՀ դրամից: Հիմնվելով ՀՀ Գնումների մասին օրենքի 28 հոդվածի 1-ին մասի 10 կետի, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից առաջարկում եմ պայմանագիրը ճանաչել անվավեր:

5. Ապացույցներ մեր ընկերությունը չի կարող ներկայացնի, քանի, որ գնման գործընթացը տեղի էր ունեցել համակարգի միջոցով: Ուստի միջնորդում ենք բողոք քննող անձին, որպեսզի նա հարցում կատարի համակարգը սպասարկողին»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 01.12.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը նիստին, ով պնդել է բողոքը:

2. <u>Միասնական սոցիալական ծառայության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

Միասնական սոցիալական ծառայությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 01.12.2021թ. թիվ 02/ԳՋ/53154-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«2021 թվականի նոյեմբերի 25-ին «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/87 բողոքի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

2021 թվականի հոկտեմբերի 27-ին Միասնական սոցիալական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կողմից հայտարարվել է Ծառայության կարիքների համար անվտանգության ապահովման ծառայությունների գնման ընթացակարգ՝ ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/1 ծածկագրով:

Գնման ընթացակարգի շրջանակում հայտեր են ներկայացրել թվով յոթ կազմակերպություններ՝ այդ թվում «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն):

Գնման ընթացակարգը կազմակերպելու հիմքում ընկած իրավական հիմնավորումները.

ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/1 ծածկագրով գնման ընթացակարգը կազմակերպվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2021 թվականի նոյեմբերի 4-ը, հակադարձ աճուրդը տեղի է ունեցել 2021թ նոյեմբերի 5-ին:

Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և հրավերի 8.9 կետով սահմանված պահանջների համապատասխան՝ աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը հրավիրված գնահատող հանձնաժողովի նիստում գնահատվել է գնումների էլեկտրոնային (eauction.armeps.am) համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից համակարգով ներկայացրած հայտում ներառված փաստաթղթերի՝ ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/1 ծածկագրով հրավերի պահանջներին համապատասխանության հանգամանքը:

Գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության ներկայացրած հայտը գնահատվել է բավարար և վերջինս էլեկտրոնային (eauction.armeps.am) համակարգի կողմից հայտարարվել է ընտրված մասնակից: Գնահատող հանձնաժողովը հրավերի 1-ին մասի 8-րդ բաժնով սահմանված պահանջնրին համապատասխան գնահատում է 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի համակարգով ներկայացրած հայտի փաստաթղթերը և իրավասու չէ գնահատել առաջարկված գնի արժանահավատությունը:

Հիմք ընդունելով հայտերը գնահատելու իրավական հիմքերը՝ գնման ընթացակարգը կազմակերպվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության տառին համապատասխան, գնահատող հանձնաժողովի կողմից կայացրած որոշումները իրավաչափ են, համապատասխանում են գնումների մասին ՀՀ օրենսդրությանը, հետևաբար բողոքը անհիմն է և ենթակա է մերժման»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 01.12.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/87 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2021/87 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Միասնական սոցիալական ծառայության կարիքների համար անվտանգության ապահովման ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.11.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ ներկայացված գնային առաջարկների և հայտերի գնահատման արդյունքների հիման վրա հանձնաժողովը որոշում է կայացրել «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ին Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու և հրավերով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

3. «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ն 25.11.2021թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով մասնավորապես հայտնել է հետևյալը.

«Հակադարձ աճուրդը տեղի էր ունեցել 05.11.21թ-ին ժամը 11:30-ին: Մեր ընկերությունը մասնակցել էր գների նվազեցման հակադարձ աճուրդին: Բայց ամբողջ աճուրդի ընթացքում համակարգը կախում էր, այսինքն ժամանակը կանգնում էր և չէր ցույց տալիս ինչքան ժամանակ անցավ ներկայացված գնից, միայն, թարմացնելով համակարգը, ժամանակը սկում էր աշխատել: Վերջին րոպեներին համակարգը կախել էր ևս մեկ անգամ ներկայացված գինը, որը մենք ուղարկել ենք եղել էր 3.502.000 /երեք միլիոն հինգ հարյուր երկու հազար/ ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի/: Քանի որ գումարները գրվում են առանց ԱԱՀ-ի: Բառերով գրվել էր այս նույն թիվը /երեք միլիոն հինգ հարյուր երկու հազար/ ՀՀ դրամ և ընդհանուր գինը ներառյալ ԱԱՀ-ն կազմել էր 4,202.400 /չորս միլիոն երկու հարյուր երկու հազար չորս հարյուր/ ՀՀ դրամ:

Երբ Աճուրդը ավարտվեց պարզվեց, որ տեղի է ունեցել համակարգի սխալ, ուղարկված 3.502.000 /երեք միլիոն հինգ հարյուր երկու հազար/ ՀՀ դրամ գնի փոխարեն գրվել էր 350200 /երեք հարյուր հիսուն հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ»:

Միևնույն ժամանակ Ընկերությունը ներկայացված բողոքով միջնորդել է, որպեսզի Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքով բարձրաձայնված խնդրի

շրջանակներում հարցում կատարի էլեկտրոնային աճուրդի տեխնիկական սպասարկումն իրականացնող ընկերությանը:

4. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը, հիմք ընդունելով ներկայացված միջնորդությունը, ինչպես նաև բողոքի բազմակողմանի և օբյեկտիվ քննությամբ պայմանավորված՝ 29.11.2021թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/1/1953/-2021 գրությամբ դիմել է eauction.armeps.am համակարգը սպասարկող կազմակերպությանը՝ «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ին՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վարույթում է գտնվում Միասնական սոցիալական ծառայության կողմից կազմակերպված «ՄՍԾ-ԷԱՃԾՁԲ-22/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ի ներկայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/87 բողոքը:

Հաշվի առնելով այն փաստը, որ Ընկերության իրավունքի ենթադրյալ խախտումը վերաբերում է էլեկտրոնային աճուրդի համակարգի աշխատանքին, ուստի գործի քննության անհրաժեշտությունից ելնելով՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշմամբ ԳԲՔԱ-ՆԳ-2021/87 բողոքի շրջանակներում «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ին ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի 15-րդ կետի համաձայն՝ ներգրավվել է որպես կողմ:

Այսպիսով՝ գործի քննությամբ պայմանավորված՝ սեղմ ժամկետում անհրաժեշտություն է առաջացել տրամադրելու հետևյալ հարցերի վերաբերյալ տեղեկատվություն՝

«ՄՍԾ-ԷԱՃԾՁԲ-22/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում 05.11.2021թ. ժամը 11:30-ին տեղի ունեցած հակադարձ աճուրդի ընթացքում արդյո՞ք տեղի է ունեցել համակարգի խափանում, թե՝ ոչ:

«Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով մասնավորապես հայտնել է հետևյալը. «*Աճուրդը ավարտվելուց հետո պարզվեց, որ տեղի է ունեցել համակարգի սխալ, այն է՝ Ընկերության կողմից նշված 3 502 000 ՀՀ դրամի փոխարեն գրվել էր 350200 ՀՀ դրամ*», արդյո՞ք առկա է Ընկերության կողմից վկայակոչված խնդիրը»:

5. Ի պատասխան վերը նշված գրության՝ «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ն 08.12.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 30.11.2021 թվականի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/87 գրության տեղեկացնում ենք, որ մեր կողմից ուսումնասիրվել է eauction. armeps.am համակարգի տվյալների շտեմարանը և «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ին ներկայացնող միակ

օգտատեր Էդիգար Թովմասյանի գործողության լոգերը: «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակում «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ն մասնակցել է հակադարձ աճուրդին և 05.11.2021 11:59:57-ին կատարել է հաղթող գնառաջարկ 350200: Միևնույն ժամանակ հայտնում ենք, որ նշված ժամանակահատվածում համակարգի խափանումներ չի հայտնաբերվել»:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ի 25.11.2021թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, Միասնական սոցիալական ծառայության դիրքորոշումը և գործում առկա փաստաթղթերը, «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ի 08.12.2021թ. գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 4-րդ կետի համաձայն՝ սույն կարգում օգտագործվում են հետևյալ հասկացությունները՝

1) էլեկտրոնային աճուրդի համակարգ (հետայսու՝ համակարգ)՝ էլեկտրոնային աճուրդների իրականացումն ապահովող համակարգ (www.armeps.am/eaction).

2) մասնակից՝ պատվիրատուի հետ պայմանագիր կնքելու նպատակով էլեկտրոնային աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող և համակարգում գրանցված անձ.

3) էլեկտրոնային աճուրդ՝ էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ նոր՝ նվազեցված գները ներկայացնելու գործընթաց, որը հնարավորություն է տալիս ավտոմատ

գնահատման մեթոդներով (միջոցներով) որոշելու հայտեր ներկայացրած մասնակիցների զբաղեցրած տեղերը՝ հաջորդականությունը.

4) հայտ՝ հրավերի հիման վրա մասնակցի կողմից էլեկտրոնային եղանակով ներկայացվող առաջարկ.

5) լիազորված մարմին՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն.

6) օգտվողներ՝ համակարգի շահագործման և դրանից օգտվելու թույլտվություն ունեցող անձինք.

7) քայլ՝ մինչև էլեկտրոնային աճուրդի ամփոփումը՝ մասնակցի կողմից վերանայված և ներկայացված նոր՝ նվազեցված գնային առաջարկ.

8) առաջին տեղն զբաղեցրած մասնակից՝ մասնակից, որն էլեկտրոնային աճուրդի ամփոփման համար սահմանված ժամկետը լրանալու պահի դրությամբ ներկայացրել է նվազագույն գնային առաջարկ:

Կարգի 15-րդ կետի համաձայն՝ մինչև աճուրդի ամփոփման համար հրավերով սահմանված ժամկետը լրանալը՝ համակարգն ավտոմատ եղանակով մասնակիցներին ներկայացնում է յուրաքանչյուր մասնակցի քայլը և այն կատարելու օրը, ժամը:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ աճուրդն ամփոփվում է հրավերում նշված կոնկրետ ժամը լրանալու դրությամբ կամ սույն կարգի 10-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքում:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ աճուրդն ամփոփվելու պահի դրությամբ համակարգն ավտոմատ եղանակով պատվիրատուին և հայտեր ներկայացրած մասնակիցներին ներկայացնում է աճուրդի արդյունքները՝ ըստ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների անվանումների և զբաղեցրած տեղերի:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.1, 8.4, 8.5 և 8.6 ենթակետերի համաձայն՝

8.1 Սույն հրավերով սահմանված՝ հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալու պահի դրությամբ համակարգն հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին և գնահատող հանձնաժողովի բոլոր անդամներին միաժամանակ ավտոմատ եղանակով ուղարկում է ներկայացված նվազագույն գնային առաջարկը՝ առանց ավելացված արժեքի հարկի գումարի, ըստ չափաբաժինների էլեկտրոնային աճուրդը սկսելու օրը և ժամը, ինչպես նաև օգտագործվող էլեկտրոնային սարքավորումների հետ անհատական կապուղի հաստատելու համար անհրաժեշտ տվյալները: Եթե սույն ընթացակարգը

բողոքարկվել է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալը և առկա չէ ընթացակարգի կասեցումը հանելու մասին գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշում, ապա սույն կետով նախատեսված տեղեկատվությունը համակարգը մասնակիցներին ուղարկում է բողոքի վերաբերյալ կայացված որոշումն ուժի մեջ մտնելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Ընդ որում անկախ ընթացակարգը կասեցված լինելու հանգամանքից, մասնակիցներն ունեն մինչև սույն հրավերով հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալը հայտեր ներկայացնելու, ներկայացված հայտերը փոխելու կամ հետ վերցնելու հնարավորություն:

8.4 Աճուրդի ընթացքում ըստ չափաբաժինների կատարվող յուրաքանչյուր քայլի արդյունքում նվազեցվող գումարը չպետք է պակաս լինի աճուրդն սկսելու պահին այդ չափաբաժնի մասով ներկայացված նվազագույն գնային առաջարկի մեկ տոկոսից: Ընդ որում նվազեցվող գնային առաջարկները ներկայացվում են պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով, որը հաշվարկվում է քանակ x միավորի գին բանաձևով: Այն մասնակիցները, որոնք տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարեն ավելացված արժեքի հարկ, նվազեցվող գները ներկայացնում են առանց այդ հարկի գումարի հաշվարկման: Եթե տվյալ չափաբաժնի գծով աճուրդի ընդհանուր տևողության ընթացքում (30 րոպե) որևէ քայլ կատարելու պահից հաշված 5-րդ րոպեն լրանալը չի կատարվում նոր քայլ, ապա 5-րդ րոպեն լրանալու պահի դրությամբ աճուրդը տվյալ չափաբաժնի մասով համարվում է ամփոփված, և վերջին քայլը կատարած մասնակիցը համարվում է առաջին տեղն զբաղեցրած մասնակից:

8.5 Մինչև աճուրդի ամփոփման համար սույն հրավերով սահմանված ժամկետը լրանալը՝ համակարգն ավտոմատ եղանակով մասնակիցներին ներկայացնում է յուրաքանչյուր մասնակցի քայլը և այն կատարելու օրը, ժամը:

8.6 Աճուրդի բոլոր չափաբաժինների արդյունքներն ամփոփվելուց անմիջապես հետո համակարգի հրապարակային էջի "Հայտեր բաժնում" ավտոմատ եղանակով հրապարակվում են ըստ յուրաքանչյուր չափաբաժնի համար սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք աշխատանքների համար գնման հայտով սահմանված գները, աճուրդի արդյունքում ըստ չափաբաժինների որոշված ինչպես առաջին տեղը զբաղեցրած, այնպես էլ մյուս մասնակիցների անվանումներն ու վերջիններիս կողմից ինչպես հայտով, այնպես էլ աճուրդն ամփոփվելու պահի դրությամբ ներկայացված գներն ու հայտով ներկայացված փաստաթղթերը: Համակարգը սույն կետով նախատեսված

տեղեկատվությունը միաժամանակ ավտոմատ եղանակով ուղարկում է գնահատող հանձնաժողովի անդամներին, քարտուղարին և հայտեր ներկայացրած մասնակիցներին:

Այսպես, Միասնական սոցիալական ծառայության կարիքների համար անվտանգության ապահովման ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցության հայտ է ներկայացրել «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.11.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ ներկայացված գնային առաջարկների և հայտերի գնահատման արդյունքների հիման վրա հանձնաժողովը որոշում է կայացրել «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ին Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու և հրավերով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

«Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ն 25.11.2021թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով մասնավորապես հայտնել է հետևյալը.

«Հակադարձ աճուրդը տեղի էր ունեցել 05.11.21թ-ին ժամը 11:30-ին: Մեր ընկերությունը մասնակցել էր գների նվազեցման հակադարձ աճուրդին: Բայց ամբողջ աճուրդի ընթացքում համակարգը կախում էր, այսինքն ժամանակը կանգնում էր և չէր ցույց տալիս ինչքան ժամանակ անցավ ներկայացված գնից, միայն, թարմացնելով համակարգը, ժամանակը սկում էր աշխատել: Վերջին րոպեներին համակարգը կախել էր ևս մեկ անգամ ներկայացված գինը, որը մենք ուղարկել ենք եղել էր 3.502.000 /երեք միլիոն հինգ հարյուր երկու հազար/ ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի/: Քանի որ գումարները գրվում են առանց ԱԱՀ-ի: Բառերով գրվել էր այս նույն թիվը /երեք միլիոն հինգ հարյուր երկու հազար/ ՀՀ դրամ և ընդհանուր գինը ներառյալ ԱԱՀ-ն կազմել էր 4,202.400 /չորս միլիոն երկու հարյուր երկու հազար չորս հարյուր/ ՀՀ դրամ:

Երբ Աճուրդը ավարտվեց պարզվեց, որ տեղի է ունեցել համակարգի սխալ, ուղարկված 3.502.000 /երեք միլիոն հինգ հարյուր երկու հազար/ ՀՀ դրամ գնի փոխարեն գրվել էր 350200 /երեք հարյուր հիսուն հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ»:

Միևնույն ժամանակ Ընկերությունը ներկայացված բողոքով միջնորդել է, որպեսզի Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքով բարձրաձայնված խնդրի շրջանակներում հարցում կատարի էլեկտրոնային աճուրդի տեխնիկական սպասարկումն իրականացնող ընկերությանը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը, հիմք ընդունելով ներկայացված միջնորդությունը, ինչպես նաև բողոքի բազմակողմանի և օբյեկտիվ քննությամբ պայմանավորված՝ 29.11.2021թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/1/1953/-2021 գրությամբ դիմել է «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ին՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վարույթում է գտնվում Միասնական սոցիալական ծառայության կողմից կազմակերպված «ՄՍԾ-ԷԱՃԾՁԲ-22/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ի ներկայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/87 բողոքը:

Հաշվի առնելով այն փաստը, որ Ընկերության իրավունքի ենթադրյալ խախտումը վերաբերում է էլեկտրոնային աճուրդի համակարգի աշխատանքին, ուստի գործի քննության անհրաժեշտությունից ելնելով՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշմամբ ԳԲՔԱ-ՆԳ-2021/87 բողոքի շրջանակներում «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ին ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի 15-րդ կետի համաձայն՝ ներգրավվել է որպես կողմ:

Այսպիսով՝ գործի քննությամբ պայմանավորված՝ սեղմ ժամկետում անհրաժեշտություն է առաջացել տրամադրելու հետևյալ հարցերի վերաբերյալ տեղեկատվություն՝

«ՄՍԾ-ԷԱՃԾՁԲ-22/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում 05.11.2021թ. ժամը 11:30-ին տեղի ունեցած հակադարձ աճուրդի ընթացքում արդյո՞ք տեղի է ունեցել համակարգի խափանում, թե՝ ոչ:

«Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով մասնավորապես հայտնել է հետևյալը. «*Աճուրդը ավարտվելուց հետո պարզվեց, որ տեղի է ունեցել համակարգի սխալ, այն է՝ Ընկերության կողմից նշված 3 502 000 ՀՀ դրամի փոխարեն գրվել էր 350200 ՀՀ դրամ*», արդյո՞ք առկա է Ընկերության կողմից վկայակոչված խնդիրը»:

Ի պատասխան վերը նշված գրության՝ ***«ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ն 08.12.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.***

«***Ի պատասխան Ձեր 30.11.2021 թվականի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/87 գրության տեղեկացնում ենք, որ մեր կողմից ուսումնասիրվել է eauction. armeps.am համակարգի տվյալների շտեմարանը և «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ին ներկայացնող միակ օգտատեր Էդիգար Թովմասյանի գործողության լոգերը: «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակում «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ն մասնակցել է հակադարձ աճուրդին և 05.11.2021 11:59:57-ին կատարել է հաղթող***

գնառաջարկ 350200: Միևնույն ժամանակ հայտնում ենք, որ նշված ժամանակահատվածում համակարգի խափանումներ չի հայտնաբերվել»:

Այսպիսով՝ «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից բողոքով վիճարկվող փաստական հանգամանքը համադրելով համակարգի տեխնիկական սպասարկում իրականացնող ընկերության՝ «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ի հարցման պատասխանի հետ՝ գտնում եմ, որ ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ Ընկերության կողմից բողոքով վիճարկվող այն փաստը, որ հակադարձ աճուրդի ժամանակ տեղի է ունեցել համակարգի սխալ և Ընկերության կողմից ուղարկված 3 502 000 ՀՀ դրամ գնի փոխարեն նշվել էր 350 200 ՀՀ դրամ չի համապատասխանում իրականությանը, քանի որ համաձայն «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ի գրության՝ հակադարձ աճուրդի ժամանակահատվածում համակարգի խափանումներ չի հայտնաբերվել, իսկ 350 200 ՀՀ դրամ գնային առաջարկը ներկայացվել է Ընկերության կողմից:

Միևնույն ժամանակ հարկ եմ համարում հայտնել հետևյալը՝

Ընթացակարգի հայտարարության համաձայն՝ ընտրված մասնակիցը որոշվում է հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ էլեկտրոնային աճուրդի արդյունքում նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Կարգի 4-րդ կետի 7-րդ և 8-րդ ենթակետերի համաձայն՝ սույն կարգում օգտագործվում են հետևյալ հասկացությունները՝

7) քայլ՝ մինչև էլեկտրոնային աճուրդի ամփոփումը՝ մասնակցի կողմից վերանայված և ներկայացված նոր՝ նվազեցված գնային առաջարկ.

8) առաջին տեղն զբաղեցրած մասնակից՝ մասնակից, որն էլեկտրոնային աճուրդի ամփոփման համար սահմանված ժամկետը լրանալու պահի դրությամբ ներկայացրել է նվազագույն գնային առաջարկ:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերը նշված իրավական կարգավորումները գտնում եմ, որ տվյալ դեպքում «ՄՍԾ-ԷԱՃԾՁԲ-22/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ամփոփման համար սահմանված ժամկետը լրանալու պահի դրությամբ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի և դրանից բխող հետևանքներն ու պատասխանատվությունը պետք է կրի Ընկերությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից 25.11.2021թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**